Նվիրվում է Առնո Բաբաջանյանի ծննդյան 105-ամյակին

ԴԱՎԻԹ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Խմբավար, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
Հայաստանի Երաժշտական Ընկերության նախագահ,
«Մովսես Խորենացի» մեդալակիր,
«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի շքանշանակիր

E-mail: davitghazaryan@gmail.com

DOI: 10.58580/18290019-2025.1.68-73

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 17.4.2026 թ.,
ընդունվել է տպագրության՝ 26.4.2026 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 15.4.2026 թ.:
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ամփոփում

Հոդվածագիրն ընդհանուր գծերով անդրադարձել է պանծալի կոմպոզիտոր Առնո Բաբանջանյանի ստեղծագործությանը և ներկայացնում է նրան որպես ժամանակակից մեծագույն դաշնակահարի։ անդրադառնում է նաև Հոդվածագիրն անդրադառնում է Առնո Բաբաջանյանին տրված բնութագրերին՝ տրված նրան որպես Կ. Ն. Իգումնովի աշակերտի և Դ. Դ. Շոստակովիչի արտահայտությունը Առնո Բաբաջանյանի դաշնամուրային Տրիոյի կապակցությամբ։ Արամ Խաչատրյանը և Ա. Բաբաջանյանի առաջին գործերի հրատարակիչ՝ Եղիշե Չարենցը կանխատեսել են բացառիկ, տաղանդավոր կոմպոզիտորի ապագա։ Ներկայացվում է ԵՊԿ-ում ուսումնառությունը Վարդգես Տալյանի և ուսման շարունակումը ՄՊԿ-ում։ Հոդվածագիրը անդրադառնում տարբեր ժանրերի ստեղծագործությունների, որոնք արժանացել են պետական պարգևներ։

Բանալի-բառեր. *Առնո Բաբաջանյան, կոմպոզիտոր, դաշնակահար, Կ. Ն. Իգումնով, Դ. Դ. Շոստակովիչ, Ա. Ի. Խաչատրյանը, Ե. Չարենց, Վ. Գ. Տալյան, ԵՊԿ, ՄՊԿ։*

Abstract

Choirmaster, Professor at Yerevan Komitas State Conservatory, Honored Worker of Culture of RA ***David Garsevan Ghazaryan. - "Dedicated to the 105th Anniversary of the Birth of Arno Babajanian".***

The author of this article outlines the creative output of the distinguished composer Arno Babajanian, presenting him as one of the eminent pianists of the modern era. The paper characterizes Babajanian 's development as a student of K. N. Igumnov and highlights D. Shostakovich 's commentary on Babajanian 's Trio. Furthermore, the author notes how Aram Khachaturian, along with the prominent poet Yeghishe Charents, who served as the publisher of Babajanian's earliest opuses, both foresaw the composer's brilliant future. The article describes Babajanian's foundational studies under V. Talyan at YSC and his subsequent education at the MSC. Finally, the author examines various works across multiple genres that earned the composer prestigious state awards.

Key Words: *Arno Babajanian, composer, pianist, K. N. Igumnov, D. D. Shostakovich, A. I. Khachaturian, Ye. Charents, V. G. Talyan, YSU, MSC.*

Абстракт

Хормейстер, профессор Ереванской государственной консерватории им.Комитаса, Заслуженный работник культуры РА ***Давид Гарсеванович Казарян. - "К 105-летию со дня рождения Арно Бабаджаняна".***

Автор статьи в общих чертах обращается к творчеству выдающегося композитора Арно Бабаджаняна и представляет его как выдающегося пианиста современности. Приводится характеристика Бабаджаняна -ученика К.Н.Игумнова, высказывание Д.Шостаковича о Трио Арно Бабаджаняна. Арам Хачатурян и Егише Чаренц как издатель первых опусов Бабаджаняна предсказали выдающееся будущее композитора. Описывается период учебы у В.Тальяна в ЕГК и продолжение учебы в МГК. Автор обращается к произведениям разных жанров, удостоенных правительственных наград.

Ключевые слова: *Арно Бабаджанян, композитор, пианист, К.Н.Игумнов, Д.Д.Шостакович, А.И.Хачатурян, Егише Чаренц, В.Г.Тальян, ЕГК, МГК.*

Նվիրվում է Առնո Բաբաջանյանի ծննդյան 105-ամյակին

Նախաբան

XX դարի հայկական կոմպոզիտորական դպրոցի ամենապայծառ ներկայացուցիչ Առնո Հարությունի Բաբաջանյանը՝ բարձրակարգ միջազգային նշանակության դաշնակահար և՛ անզուգական կոմպոզիտոր, ում մեղեդային բացառիկ տաղանդը, խոր զգացմունքայնությունը առավելագույնս դրսևորվել են նրա քնարական և հայրենասիրական երգերում, թատերական և կինոերաժշտության ասպարեզում:

Անառարկելի է ստեղծագործական դրամատիզմը և մեղեդային ու հարմոնիկ հագեցվածությունը դաշնամուրի և նվագախմբի համար գրված «Հերոսական բալլադում» (այն 1951 թ. արժանացավ ԽՍՀՄ Պետական մրցանակի):

Առնո Բաբաջանյանի կայացումը

Կոմպոզիտորի սիրելի քաղաքի հետ աճել ու զարգացել է Բաբաջանյանի երաժշտական տաղանդը:

«Երևան» երգը («Առաջին սիրո երգը» կինոնկարից), որ գրվել է հուզական ջերմությամբ և անկեղծությամբ, իր ծնդավայրը ջերմորեն սիրող հեղինակի անմիջական արտահայտությունն է, Առնոյի սրտի խոսքը՝ ուղղված մայրենի քաղաքին:

1921 թվականի հունվարի 22-ին Երևանում ծնվեց սիրված և հանրահայտ կոմպոզիտորը: Արամ Խաչատրյանը 1926 թ. լսելով չորս տարեկան Առնոյի հորինած եղանակները, դեռևս ինքը լինելով երիտասարդ կոմպոզիտոր, գնահատեց երեխայի երաժշտական ցայտուն ընդունակությունները՝ կանխատեսելով նրան պայծառ ապագա:

Յոթ տարեկանում Առնոն ընդունվեց Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոց, միաժամանակ սովորեց կոնսերվատորիային կից երաժշտական դրպրոցում:

Դպրոցում սովորելու դասընթացը քառամյա էր: Առնոն երաժշտական դպրոցն ավարտեց փոքրահասակների համար բարդ գործ համարվող Լ. վան Բեթհովենի առաջին դաշնամուրային Կոնցերտով և նվագեց սիմֆոնիկ նվագախմբի հետ, որը ղեկավարում էր դիրիժոր Գևորգ Բուդաղյանը: Երաժշտական դպրոցում սովորելու ժամանակ Առնոյի համար նշանակալի եղավ նաև մի ուրիշ կարևոր իրադարձություն: «Հայպետհրատ»-ը 1000 օրինակով տպագրեց Առնոյի հեղինակած «Պիոներական քայլերգը» 1932 թ.: Նախաձեռնողը հրատարակչության կուլտուրայի բաժինն էր, որը ղեկավարում էր մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցը: Ինչպես վկայում է կոմպոզիտոր, խմբավար Մարտին Մազմանյանը, բանաստեղծը նախորդ օրն իր հիացմունքն էր արտահայտել շնորհալի մի երեխայի ունեցած ելույթից և որոշել էր խրախուսել նրան: Տաղանդավոր բանաստեղծը «Պիոներական քայլերգի» բնագրի վրա մակագրում է opus 1, այսինքն ստեղծագործություն թիվ 1 (հրատարակել):

Տասներեք տարեկան Առնոն դպրոցական օլիմպիադայում առաջին տեղերն է գրավում մաթեմատիկայից և ֆիզիկայից: Բայց դաշնամուրը նրա համար ամենասիրած երաժշտական գործիքն էր, չնայած պատանին անչափ հափշտակվում էր բակի խաղերով: Եվ, ինչպես վկայում են ժամանակակիցները (այդ մասին փաստում է երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Մեդա Թաշչյանը) ֆիլհարմոնիայի դահլիճում մենահամերգի ժամանակ, ուր հանդիսատեսները շունչները պահած՝ զմայլված հետևում էին Առնոյի նվագը, պատանին գրպանից հանում է թաշկինակը՝ քրտնած ձեռքերը սրբելու, թաշկինակի հետ բեմի վրա թափվում են հոլը, նրա թելը, կավճի մի կտոր և գունավոր մատիտներ:

Դահլիճը պոռթկում է ծիծաղից, բայց երբ պատանու մատները դիպչում են դաշնամուրի ստեղներին, ունկընդիրը քար լռությամբ, համակ ուշադրությամբ լսում է Բեթհովենի, Մոցարտի, Մենդելսոնի դաշնամուրային ստեղծագործությունները, իսկ համերգի ավարտին Առնոն նվագում է իր հորինած քայլերգը: Առնոյի հաջողության մասին «Խորհրդային Հայաստան» թերթն այդ օրերին գրեց. «... հայտնաբերվեցին լավագույն պատանի տաղանդավոր երաժիշտներ, դաշնամուրի նվագի մեջ առանձնացավ Առնո Բաբաջանյանը: Նա նվագել սկսել է 4 տարեկանից: Մասնագետների վկայությամբ նրա մեջ թաքնված է ապագա խոշոր երաժշտի տաղանդ» (1.):

Չնայած ստեղծագործության ասպարեզում ունեցած որոշ հաջողություններին, այնուամենայնիվ, Առնոյի համար առայժմ գլխավորը մնում էր կատարողական արվեստը:

Բաբաջանյան դաշնակահարը

Երևանի կոնսերվատորիայի տնօրեն խոշորագույն դիրիժոր Կոնստանտին Սարաջևի նախաձեռնությամբ, 1937 թ. անցկացվում է մրցույթ դաշնամուրի և ջութակի բաժիններում: Դաշնակահարների մեջ առաջին տեղը գրավում է Առնո Բաբաջանյանը:

Ավելի ու ավելի պարզ էր դառնում, որ տաղանդավոր երաժշտի հետագա զարգացման ու կատարելագործման համար խիստ անհրաժեշտ էր ուսումը շարունակել ավելի խոշոր երաժշտական ուսումնական հաստատությունում:

Մոսկվայի Հայկական Մշակույթի տան երաժշտական ստուդիայում կատարելագործվում է Ա. Բաբաջանյանը, միաժամանակ սովորելով Երևանի և Մոսկվայի կոնսերվատորիաներում (առաջինում՝ կոմպոզիցիա, երկրորդում՝ դաշնամուր) պրոֆեսոր Վ. Տայլանի և տաղանդավոր դաշնակահար Կ. Իգումնովի դասարաններում:

Կարևոր փաստաթուղթ է Իգումնովի տված բնութագիրը Առնո Բաբաջանյանի մասին 1942 թ., երբ նրան ընդունում էին Հայաստանի Կոմպոզիտորների միության անդամ: «Մոսկվայի Պետական կոնսերվատորիայի իմ դասարանի ուսանող Ա. Բաբաջանյանը երաժշտական մի հազվագյուտ, տաղանդավոր անհատականություն է: Կոմպոզիտորական մեծ ձիրք ունենալու հետ միասին նա օժտված է կատարողական գերազանց՝ և՛ երաժշտական, և՛ տեխնիկական տվյալներով: ... Առնոյին հատուկ է կատարողական տեմպերամենտը, վստահությամբ կարելի է ասել, որ նա կունենա արտիստական փայլուն ապագա» (2. էջ 165):

Բաբաջանյան կոմպոզիտորը

Երիտասարդ Բաբաջանյանի ստեղծագործական ակտիվությունը գնալով նկատելի էր դառնում: Նա սկսում է մասսայական երգեր հորինել, աշխատում է կամերային--գործիքային ժանրում:

Երևանի կոնսերվատորիայում Վարդգես Տալյանը ազգային երաժշտության հանդեպ սեր էր ներարկում ուսանողների մեջ: Մասնավորապես նրա դրդումով Առնոն ձեռնամուխ է լինում գրելու դաշնամուրային Կոնցերտ, որն իր ժամանակին հեղինակը մեծ հաջողությամբ կատարում է սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ, Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտական տասնօրյակի օրերին՝ 1944 թ. Թբիլիսիում: Մեկ տարի անց Բաբաջանյանն իր կոնցերտը մեծ հաջողությամբ կատարեց Մոսկվայում:

1946 թ. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին կից Արվեստի գործերի կոմիտեն մի խումբ երիտասարդ կոմպոզիտորների՝ Ա. Հարությունյանին, Ա. Բաբաջանյանին, Է. Միրզոյանին, Ա. Խուդոյանին, ավելի ուշ՝ Ղ. Սարյանին, գործուղեց Մոսկվա՝ կատարելագործվելու: Մոսկվայում նրանք պարապում էին Արամ Խաչատրյանի ղեկավարությամբ, ինչպես նաև դասեր էին առնում Պ. Ի. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի առաջատար մասնագետներից՝ Գ. Լիտինսկուց, Դ. Ռոգալ-Լևիցկուց, Վ. Ցուկերմանից: Լինելով խորապես ազգային կոմպոզիտոր՝ իր թե՛ փոքր, թե՛ մեծածավալ ստեղծագործություններում, լինի դա ինտոնացիոն կառուցվածքի, հարմոնիայի, թե՛ ռիթմի ոլորտում, Բաբաջանյանը միշտ էլ աշխատում է գտնել արտահայտչական նոր միջոցներ՝ հարազատ մնալով գաղափարական և գեղագիտական և սեփական պահանջներին: Ամեն մի երկի հետ կոմպոզիտորը կատարելագործում է իր վարպետությունը:

Մեր երաժշտական հանրությունը ջերմությամբ է ընդունել և՛ «Հերոսական բալլադը», և՛ «Տրիոն» (գրված դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար), և՛ «Ջութակի ու դաշնամուրի Սոնատը»: Մեծ ժողովրդականություն բերեցին նրան «Վաղարշապատի պարը» և «Պրելյուդը», որոնք արժանացան 1-ին մրցանակի: Իսկ մեծանուն կոմպոզիտոր Դ. Շոստակովիչը գրեց. «Հայ կոմպոզիտորի ստեղծագործության նկատմամբ հիրավի ասպետական վերաբերմունք ունենալու օրինակ է Դ. Օյստրախի ու Ս. Կնուշևիցկու գործունեությունը, որոնք հանդես եկան Ա. Բաբաջանյանի սքանչելի «Տրիո»-ի կատարմամբ: Ես առանց վախենալու կարող եմ այդ կատարումն անվանել կատարողական արվեստի գլուխ-գործոց: Դ. Օյստրախի ու Ս. Կնուշևիցկու արժանի նվագընկերը հանդիսացավ «Տրիո»-ի հեղինակ Ա. Բաբաջանյանը՝ հիանալի մի դաշնակահար, խոշոր մասշտաբի կատարող» (3. էջ 29):

Առնոն Բաբաջանյանի նվաճումները երաժշտության տարբեր ժանրերում (էստրադային երգ, կինոնկարների և թատերական ներկայացումների համար երաժշտություն) հետզհետե այնքան նշանակալի դարձան, որ նրա անունը նույնքան սիրելի դարձավ, որքան նրա ստեղծագործությունները:

Հայաստանի երաժշտական մշակույթի զարգացման մեջ իր ունեցած վաստակի համար Ա. Բաբաջանյանը արժանացավ ՀՍՍՀ ժողովրդական արտիստի (1960 թ.) իսկ 1971 թ. Խորհրդային Միության ժողովրդական արտիստի բարձր կոչումներին:

Կոմպոզիտորի դաշնամուրի համար գրված «Պոեմը» և «Վեց պատկերը»՝ նրբակերտ «Ժողովրդականը», «Խորալը» և «Սասունցիների պարը» ուղղակի բարձրակետն են և յուրաքանչյուր կատարողից պահանջում են անկաշկանդ հուզական պոռթկումներ, դաշնամուրայնություն, կուռ ռիթմական զծանկար և անզուգական կատարողական տեխնիկա:

Ա. Բաբաջանյանի վերջին խոշոր կտավը Դ. Շոստակովիչի հիշատակին նվիրված լարային 3-րդ Կվարտետն է, որը կատարվում է աշխարհի լավագույն լարային տետրախորդների կողմից:

Վերջաբան

Առնոն Բաբաջանյանը երկրային կյանքից հեռացավ 1983 թ. 62 տարեկանում, ծանր երկարամյա հիվանդությունից հետո: Նրա ածյունը հանգչում է Երևանի քաղաքային պանթեոնում: Ա. Բաբաջանյանի անունով մեր քաղաքում ունենք փողոց, համերգասրահ, երաժշտամանկավարժական քոլեջ և սիրելի մայրաքաղաքի սրտում, օպերային թատրոնի հարևանությամբ, վեր է հառնում տաղանդավոր քանդակագործ Դավիթ Բեջանյանի անզուգական արտիստիկ կեցվածքով, ոչ ավանդական հուշարձանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. //Խորհրդային Հայաստան
2. *Апоян Ш. А.,* Незабываемые имена (очерки о пианистах-армянах)., Ер.: Издательство ЕГК, 2008.
3. *Аматуни С. Б.,* Жизнь и творчество Гегуни Читчян., Ер.: Арчеш, 2003.

/ / Soviet Armenia.

Apoyan Sh. A., Unforgettable Names (Essays on Armenian Pianists). Yerevan: YSC Publishing House, 2008.

Amatuni S. B., The Life and Work of Geghuni Chitchian. Yerevan: Archesh, 2003.

REFERENCES

1. //Khorhrdayin Hayastan
2. Apoyan Sh. H., Nezabyvaemye imena (ocherki o pianistakh-armyanakh)., Yer.: Izdatel'stvo YGK, 2008.
3. Amatuni S. B., Zhizn' i tvorchestvo Geghuni Chitchyan., Yer.: Archesh, 2003.

Նվիրվում է Առնո Բաբաջանյանի ծննդյան 105-ամյակին

Հեղինակի մասին. *ԴԱՎԻԹ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ (ծ. 13.10.1939, Երևան) խմբավար, հաս. գործիչ, մանկավարժ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր աշխատող (1985 թ.): Ավարտել է՝ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ (1965 թ.), Կոմիտասի անվ. ԵՊԿ սիմֆոդիրիժորության և խմբավարության բաժինները (1971 թ.): Դասավանդում է՝ 1970թ-ից ԵՊԿ-ում խմբավարություն, պրոֆեսոր է (2002 թ.), զբաղեցրել է դեկանի (1995-2015 թթ.) և 2014-ից ռեկտորի խորհրդականի պաշտոնները: 1987-ից եղել է Հայաստանի երաժշտական ընկերության փոխնախագահը, 1996թ-ից՝ նախագահն է: Կազմել և խմբագրել է հայ խմբերգ. երաժշտությանը վերաբերող բազմաթիվ ժողովածուներ՝ «Հայկական խմբերգեր» (1986 թ.), «Հայ կոմպոզիտորների խմբերգերի ընտրանի» (2007 թ.), «Հոգևոր երգեր և խմբերգեր» (2004 թ.), Կոմիտասի «Հոգևոր տաղեր, երգեր, մեներգեր» (2006 թ.), Կոմիտասի «Խմբերգերի ընտրանի» (2001 թ., 2009 թ.) և այլ ժողովածուներ և բազմաթիվ հոդվածներ: Արժանացել է՝ «Մովսես Խորենացի» (2007 թ.), «Ծաղկիր իմ հանրապետություն» փառատոնի (1985 թ.), ՀՀ ՄՆ (2008 թ.), ԿԳՆ (2009 թ.) ոսկե, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016 թ.) մեդալների:*

About the author: *DAVID GARSEVAN GHAZARYAN (b. 1939, Yerevan) - Choirmaster, pedagogue, the Honored Art Worker of Armenia (1985). Graduated from Yerevan State Pedagogical Institute (1965) and Yerevan State Conservatory, Department of Choir Conducting (1971). Since 1970 teaches at YSC; professor since 2002. In 1995-2015 served as Dean, since 2014 - the Advisor to the Rector of the YSC. In 1987-1996 has been the Vice President of the Armenian Musical Society, since 1996 - the President of the AMS. D. Ghazaryan is the author and editor of collections of choir works of Armenian composers, such as "Armenian Choir Music" (1986), "Selected Choruses by Armenian Composers" (2007), "Sacred Songs and Choruses" (2004), "Sacred Taghs, Songs and Solo Songs by Komitas" (2001, 2009), etc. He is the author of numerous articles in the Armenian press. David Ghazaryan has been awarded the medal of "May You Blossom, My Republic"Festival (1985); Movses Khorenatsi Medal (2007), The Medal of the Ministry of Culture of Armenia (2008), The Medal of the Ministry of Education and Science (2009), Medal for Merit to the Fatherland, Second Class (2016).*

Об авторе: *ДАВИД ГАРСЕВАНОВИЧ КАЗАРЯН (род. 13.10.1939, г. Ереван), хормейстер, педагог, заслуженный деятель культуры Армянской ССР (1985). Окончил: АГПУ им. Х. Абовяна (1965) и хоро-дирижерское отделение ЕГК им. Комитаса (1971). Преподает в ЕГК (с 1970), профессор (2002), занимал должность декана (1995-2015), советник ректора (с 2014). С 1987 г. - вице-президент Музыкального общества Армении, с 1996 г. - президент. Составитель и редактор хоровых сочинений армянских композиторов, многочисленных музыкальных сборников: “Армянские хоры” (1986), “Избранные хоры армянских композиторов” (2007), “Духовные песни и хоры” (2004), “Духовные таги, песни, сольные песни” Комитаса (2006), “Сборник собраний хоров” Комитаса (2001, 2009) и др. Автор многочисленных статей в республиканской прессе. Награжден медалями: фестиваля “Цвети моя республика” (1985), “Мовсеса Хоренаци” (2007), Министерства культуры РА (2008), Министерства образования и науки (2009), “За заслуги перед Отечеством” II степени (2016).*